ընդհանուր բնութագիրը, ծնողներին տրամադրվել են գործնական խորհուրդներ տեղի է ունեցել դեպքերի քննարկումներ, դերային խաղ, նկարի վերլուծություն: Հանդիպման երկրորդ հատվածում ներկայացվել է 6-ից 7 տարեկանի ճգնաժամի ընդհանուր բնութագիրը, առաջնային գործունեությունները, նորագոյացությունները, տրամադրվել են գործնական խորհուրդներ, կարևորվել է հատկապես ծնող-մասնագետ համագործակցության դերը: Տեղի է ունեցել 6-ից 7 տարեկանին բնորոշ իրավիճակների քննարկումներ, վերլուծություններ: Ընդհանուր հանդիպումը ունեցել է ինտերակտիվ բնույթ՝ ընթացքում ծնողները ներկայացրել և կիսվել են իրենց փորձով միմյանց տալով նաև խորհուրդներ: Հանդիպման ավարտին իրականացվել է վարժանք՝ <<Հետ հայցք դեպքի մանկություն>>:

- <<Դեռահասության առանձնահատկությունները. Դաստիարակության ոճեր>>: Դասընթացի սկզբում տեղի է ունեցել դերային խաղ, որի ընթացքում ներկայացվել է դեռահասությանը բնորոշ իրավիճակ: Դերային խաղի ավարտից հետո մասնակիցները վերլուծել են իրավիճակը տարբեր տեսանկյուններից՝ դեռահաս, ծնող, մասնագետ, հանդիսատես: Այնուհետև ներկայացվել է դեռահասության գլխավոր նորագոյացությունները, առանձնահատկությունները: Առանձնահատուկ շեշտադրվել են սեռական հետաքրքրությունները դեռահասության շրջանում, դրանից առաջացող խնդիրները: Քննարկվել են դեռահասությանը բնորոշ հուզական վիճակները, տարիքային հիմնահարցերը, որոնք առաջնային են դառնում տվյալ տարիքային շրջանում, այնուհետև քննարկվել են թե ինչպես է պետք արձագանքել դեռահասների վարքին, ծնողները կիսվել են իրենց փորձով և այդ շրջանում առաջացած խնդիրներով: Հանդիպման երկրորդ հատվածը ուղղված է եղել ծնողի կողմից կիրառվող դաստիարակության ոճերին: Ծնողներին ներկյացվել է դաստիարակության 4 ոճերը դրանց առանձնահատկությունները, հետևանքները երեխայի անձի զարգացման վրա: Այնուհետև ծնողները ներկայացրել են թե, իրենք ինչպիսի ոճ են կիրառում իրենց երեխաների նկատմամբ: Քննարկվել են իրավիճակներ, որոնց ընթացքում ծնողները ներկայացրել են 4 ոճերի կիրառման հետևանքները տվյալ իրավիճակներում:
- <<Ծնող երեխա համատեղ ժամանց>> և դասընթացների ամփոփում: Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել ծնող-երեխա համատեղ ժամանցին նվիրված տեսահոլովակների դիտում քննարկում, այնուհետև յուրաքանչյուր ծնող ներկայացրել է թե ինչպես է անցկացնում ժամանցը իր երեխայի հետ: Քննարկվել են թե որքանով իրականացան իրենց սպասելիքները դասընթացի ավարտին, ներկայացրեցել են ներկայիս հուզական վիճակը: Իրականացվել է խաղ վարժանք, մասնակիցներին բաժանվել են A4 թղթեր, որոնց վրա պատկերված են եղել երկու շրջանակներ, ըստ նշված ոլորտների՝ մասնակիցները պատկերել են հիստոգրամներ, որտեղ արտահայտել են, մեկ օրվա՝ 24 ժամվա ընթացքում տոկոսային մոտավոր հարաբերակցությամբ, յուրաքանչյուրը որքան ժամանակ է հատկացնում նշված ոլորտներից յուրաքանչյուրին: Առաջին շրջանակում պատկերել են իրենց առօրյա, իսկ երկրորդում՝ իդեալական, ցանկալի տարբերակը:Այնուհետև շեշտադրվել է այն, որ ծնողը նախ անձ է , ով ունի բազում հետաքրքրություններ, ցանկություններ, արժեքներ, դիրքորոշումներ, և չնայած այս հանդիպումներին շեշտը դրվել է ծնող երեխա հարաբերություններին, սակայն յուրաքանչյուրը իրքնահրացված է իր կողմից ծավալված բոլոր ոլորտներում, արդյունավետ ծնողը նա է, ով համեմատաբար կայացած է կյանքի բոլոր ոլորտներում, ով ժամանակ առ ժամանակ լիցքաթափվում է, ով մասնագիտական մեծ աճ է գրանցում, ով հաջողում է ծնող-երեխա փոխհարաբերություններում: